

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՍՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
գիտական խորհրդի
2022թ. _____ -ի նիստում

Ռեկտոր _____ Ե.Վ. Վարդանյան

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Կրթական աստիճանը՝ բակալավր
Կրթական մոդուլ՝ 6.22ԻՀՏ002
Կրեդիտ՝ 3

Մասնագիտություններ՝
«101501.00.6 - Զբոսաշրջություն»
«101801.00.6 - Սերվիս»

Կրթական ծրագրեր՝
«101501.01.6 - Զբոսաշրջություն»
«101801.01.6 - Սերվիս»

ՀԱՍՏԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Կազմողներ՝

Սիրանուշ Սևյան

տ.գ.թ., ասիստենտ

(ստորագրություն)

Գայանե Գյուլնազարյան

դասախոս

(ստորագրություն)

Գրախոս՝

Վահան Ավետիսյան

տ.գ.դ., պրոֆեսոր,
Երևանի ԿՄ ԳՀԻ ՓԲԸ-ի
տնօրենի տեղակալ

(ստորագրություն)

Քննարկվել և հավանության է արժանացել.

Ինֆորմատիկայի, հաշվողական տեխնիկայի և կառավարման համակարգերի
ամբիոնի 2022թ. օգոստոսի 29-ի թիվ 6 նիստին:

Ամբիոնի վարիչ՝

Մհեր Մարկոսյան

տ.գ.դ., պրոֆեսոր

(ստորագրություն)

Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի 2022թ. սեպտեմբերի 9-ի թիվ 1
նիստին:

Ֆակուլտետի ղեկան՝

Վալերիկ Հարությունյան

տ.գ.թ., դոցենտ

(ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

մասնագիտացնող ամբիոնների հետ

Դասընթացի անվանում
Կրթամոդուլ

Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ
6.22ԻՀՏ002

№	Ամբիոն	Ամբիոնի վարիչ	Ստորագրություն	Նշումներ
1.	Գեոէկոլոգիա և կենսաանվտանգություն	Շահինյան Սամվել Մարտինի		

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ, ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

N ^o	Ուսումնական աշխատանքի տեսակը	Ժամաքանակը
Կրթական մոդուլ՝ 6.22ԻՀՏ002, կրեդիտային արժեք՝ 3 կիսամյակ՝ I		
1.	Դասախոսություններ	16
2.	Լաբորատոր պարապմունքներ	16
3.	Ուսանողի ինքնուրույն աշխատանք	58
4.	Ատեստավորումներ.	
4.1	ընթացիկ*	+
4.2	Էզրափակիչ (քննություն)	+
	Ընդամենը՝	90

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասընթացի նպատակն է զբոսաշրջության և սերվիսի մասնագիտություններով սովորող ուսանողներին տալ բավարար գիտելիքներ տեղեկատվական տեխնոլոգիաների հիմքը կազմող համակարգիչների հնարավորությունների վերաբերյալ՝ դրանցից ավելի համապարփակ օգտվելու համար: Այն պարունակում է տեղեկատվություն տեխնոլոգիաների տեխնիկական ապահովման, համակարգչի կառուցվածքի և աշխատանքի սկզբունքի, հիմնական և օժանդակ սարքերի, համակարգչի ծրագրային ապահովման, MS OFFICE ծրագրային փաթեթի, համակարգչային ցանցերի, տեղեկատվական անվտանգության մասին:

Դասընթացի խնդիրն է ուսանողներին օգնել իրենց մասնագիտության բոլոր ոլորտներում կիրառել SS գիտելիքները, Excel, PowerPoint ծրագրերը:

Դասընթացը յուրացնելու համար անհրաժեշտ են գիտելիքներ հետևյալ դասընթացից.

1. Ինֆորմատիկա (ավագ դպրոց):

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

6.22ԻՀՏ002

(գիտելիք և իմացություն)

- նկարագրել համակարգչի կառուցվածքը,
- թվարկել ինֆորմացիայի ներկայացման ձևերը,
- ներկայացնել համակարգչի կառուցվածքը, WINDOWS օպերացիոն համակարգը, MS OFFICE ծրագրային փաթեթի հնարավորությունները,
- թվարկել կիրառական ծրագրերը՝ տեքստային խմբագրիչներ, աղյուսակային պրոցեսորներ, մաթեմատիկական ծրագրերի հատուկ համակարգեր և այլն,
- ներկայացնել քոմպիյութերային ցանցերի կառուցվածքը, տեսակները,
- ներկայացնել ինֆորմացիայի պաշտպանության տեխնոլոգիաները,
- թվարկել հակավիրուսային ծրագրերը,
- թվարկել տվյալները արխիվացնող ծրագրերը և նրանց բնութագրերը:

(կարողություններ)

- ցուցաբերել հմտություն օպերացիոն միջավայրի, օպերացիոն համակարգերի, սարքավորումների շահագործման ռեժիմների գործնական կիրառման բնագավառում,
- կիրառել ապարատածրագրային համակարգերի, ռեսուրսների հիմնական տեսակների բաշխման գործնական ձևերը,
- շահագործել ծրագրային փաթեթները,
- խմբագրել և ֆորմատավորել տեքստեր,
- պատրաստել և խմբագրել աղյուսակներ,
- օգտագործել ստանդարտ ֆունկցիաների գրադարաններ,

- կառուցել գծապատկերներ և դիագրամներ,
- կիրառել տվյալների բազաների հետ աշխատելու համար գործիքների հավաքածուն,
- տեսակավորել տվյալներ էլեկտրոնային աղյուսակում,
- կազմակերպել ցուցադրություններ,
- աշխատել Համացանցում՝ օգտվելով տեղեկատվա-որոնողական կայքերից, տարբեր վեբ-հավելվածներից,
- առցանց խմբագրել, փոխակերպել Office փաստաթղթերը և այլն:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ԾՐԱԳԻՐԸ

3.1 ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

№	Կրթական մոդուլի և թեմայի անվանումները	Ժամաքանակը
1	6.22ԻՀՏ002	16
<i>Թեմա 1. Ժամանակակից անհատական օգտագործման համակարգիչներ</i>		
1.1	Համակարգիչների դասակարգումը: Համակարգչի թվաբանական հիմունքները: Հաշվման համակարգեր: Ինֆորմացիա հասկացությունը, հատկությունները, կոդավորումը, չափման միավորները:	2
1.2	Համակարգչի կառուցվածքը: Հիմնական սարքերի կառուցվածքը և նշանակությունը: Պրոցեսորներ: Տեսակները և բնութագրերը: Ներքին (օպերատիվ հիշողություն): Հիշողության չափման միավորները:	4
1.3	Համակարգչի արտաքին սարքերի տեսակները և նշանակությունը: Անհատական համակարգչի մուտքի/ելքի ստանդարտ և օժանդակ սարքավորումներ: Հիշասարքերի տեսակները և նշանակությունը:	2
<i>Թեմա 2. Օպերացիոն համակարգեր, տեսակներ</i>		
1.4	Օպերացիոն համակարգերի դերը և նշանակությունը: Համեմատական բնութագրերը: WINDOWS օպերացիոն համակարգում օգտագործվող պատուհանների ընդհանուր կառուցվածքը:	2
1.5	Գործողություններ WINDOWS օպերացիոն համակարգում օգտագործվող պատուհանների հետ (տեղաշարժ, չափերի փոփոխում, տվյալների շրջապտույտ և այլն): Ֆայլեր և ֆայլադարաններ:	2
<i>Թեմա 3. Ինֆորմացիայի պաշտպանություն</i>		
1.6	Ինֆորմացիայի պաշտպանության տեխնոլոգիաներ, հակավիրուսային ծրագրեր: Տվյալների արխիվացում:	2
<i>Թեմա 4. Համակարգչային ցանցեր</i>		
1.7	Համակարգչային ցանցերի օգտագործման անհրաժեշտությունն ու բնութագրումը, ցանցերի դասակարգումը: Համացանցի ծառայությունները:	2

3.2 ԼԱՔՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

№	Լաբորատոր պարամունքի թեմայի անվանումը	Ժամաքանակը
1	6.22ԻՀՏ002	16
1.1	MICROSOFT WORD ծրագրի հրամանացանկը և պայմանական նշանները: Փաստաթղթերի խմբագրում: MICROSOFT WORD միջավայրում աղյուսակների կառուցման առանձնահատկությունները:	2
1.2	Գրաֆիկական պատկերներ պարունակող փաստաթղթի ստեղծման աշխատանք: MICROSOFT WORD միջավայրում ֆորմուլաներ ստեղծելու հնարավորություններն ու գործիքները: Ֆորմուլաներ պարունակող փաստաթղթի ստեղծման աշխատանք:	2
1.3	Ընթացիկ ատեստավորում:	2
1.4	MS Excel ծրագրի հրամանացանք: Դիագրամների և գրաֆիկների կառուցումը Microsoft Excel-ում:	2
1.5	Microsoft Excel-ի ֆունկցիաները:	2
1.6	Ընթացիկ ատեստավորում:	2
1.7	MS PowerPoint ներկայացման փաթեթը: Ցուցադրումների կազմակերպում:	2
1.8	Ընթացիկ ատեստավորում:	2

3.3 ՈՒՍԱՆՈՂԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

№	Ինքնուրույն աշխատանքի տեսակը կամ թեմայի անվանումը	Ժամաքանակը
1	6.22ԻՀՏ002	58
1.1.	Յուրաքանչյուր դասախոսությունից հետո տրված թեմայի շուրջ լրացուցիչ տեղեկատվության ուսումնասիրում:	16
1.2	Լաբորատոր աշխատանքների նախապատրաստում:	16
1.3	Հանձնարարված թեմայի շրջանակներում ինքնուրույն աշխատանքի կատարում (Օպերացիոն համակարգեր, Համակարգչային ցանցեր (լոկալ, գլոբալ), Վիրուսներ, հակավիրուսային ծրագրեր):	16
1.4	Ցուցադրանյութերի (պրեզենտացիաների) պատրաստում և ներկայացում:	10

3.4 ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐ

3.4.1 Ընթացիկ ատեստավորում՝

6.22ԻՀՏ002

Յուրաքանչյուր կիսամյակում, դասընթացի շրջանակներում նախատեսվում է կատարել 2 ընթացիկ ատեստավորում: Ատեստավորման 1-ին փուլում, համապատասխան ուսումնական գործընթացի ժամանակացույցի, ստուգողական և լաբորատոր աշխատանքների կատարման հիման վրա, կատարվում է տոկոսավորում, յուրաքանչյուրից՝ 0-

2 միավոր: Գնահատվում է լաբորատոր աշխատանքի առավելագույն քառասուն տոկոսը՝ 0-2 միավոր, 2-րդ փուլում նույն կարգով ևս վաթսուն տոկոսը՝ 0-2 միավոր: Արդյունքում ուսանողը եզրափակիչ ատեստացիայի սկզբում կարող է ունենալ 0-4 միավոր՝ կիսամյակի ընթացքում հաճախումների և ընթացիկ առաջադիմության արդյունքներով: Ընթացիկ ատեստավորումներից ստացած միավորները գումարվում են եզրափակիչ ատեստավորման ժամանակ ձեռք բերված միավորներին:

3.4.2 Եզրափակիչ ատեստավորում (քննություն)

6.22ԻՀՏ002

Ուսանողը ներկայանում է եզրափակիչ ատեստավորմանը՝ քննաշրջանի քննությամբ, որն անցկացվում հարցատոմսերով: Դասընթացը լրիվ ներկայացնող հարցաշարը և քննական տոմսի մեկ օրինակ բերված է սույն՝ 3.4.2 բաժնում, որը տրամադրվում է ուսանողներին ուսումնական կիսամյակի սկզբում: Քննությունն իրականացվում է բանավոր, որի ընթացքում ստուգվում են ուսանողի ձեռք բերած վերջնարդյունքները (գիտելիք և իմացություն, կարողություններ): Ուսանողի գնահատումն իրականացվում է 20 միավորանոց սանդղակով: Եզրափակիչ միավորը ձևավորվում է քննական հարցատոմսի և ընթացիկ ատեստավորման՝ լաբորատոր աշխատանքների արդյունքների հիման վրա: Հարցատոմսը բաղկացած է 4 հարցից, յուրաքանչյուրի գնահատման միավորը նշված է տոմսում:

Վերջնարդյունքների գնահատման չափանիշ

6.22ԻՀՏ002

Գնահատականը / Միավորը	Դասընթացի վերջնարդյունքների (գիտելիք և իմացություն, կարողություն) գնահատման չափանիշները
Անբավարար 0÷7 միավոր	Չի տիրապետում Word, Excel ծրագրերից ոչ մեկին: Չգիտի տերմիններն ու սահմանումները: Չի կարող խմբագրել տեքստեր և աղյուսակներ:
Բավարար 8÷13 միավոր	Կարող է աշխատել Word, Excel ծրագրերով, բայց թերանում է տերմինաբանության մեջ և PowerPoint ծրագրով աշխատելիս: Կարող է կառուցել գծապատկերներ, բայց չի կարողանում աշխատել ինքնուրույն և ամբողջությամբ:
Լավ 14÷17 միավոր	Ուսանողը լավ է տիրապետում MS Office ծրագրային փաթեթի հնարավորություններին, կարող է կիրառել ծրագրեր, ներկայացնել քոմպյութերային ցանցերի կառուցվածքն ու տեսակները: Տրված առաջադրանքները կատարում է որոշ բացթողումներով:
Գերազանց 18÷20 միավոր	Ուսանողը գերազանց տիրապետում է MS Office ծրագրային փաթեթին, Word, Excel, PowerPoint ծրագրերին: Կազմակերպում է ցուցադրություններ, կիրառում է տվյալների բազայի հետ աշխատելու գործիքները, գերազանց շահագործում է կիրառական ծրագրերի փաթեթները, օգտվում է տեղեկա-

	տվա-որոնողական կայքերից, վեբ հավելվածներից, կատարում է առցանց խմբագրումներ: Գերազանց կատարում է և՛ տրված, և՛ լրացուցիչ առաջադրանքները:
--	--

ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

6.22ԻՀՏ002

1. Ժամանակակից անհատական օգտագործման համակարգիչների կառուցվածքը, տեսակները և բնութագրերը:
2. Ներքին և արտաքին սարքեր: Այդ սարքերի դերը համակարգչով խնդրի լուծման իրագործման ժամանակ:
3. Պրոցեսորների տեսակները և բնութագրերը:
4. Ներքին (օպերատիվ) հիշողություն: Հիշողության չափման միավորները:
5. Արտաքին հիշող սարքեր:
6. Սկավառակատարեր: Սկավառակների տեսակները և բնութագրերը:
7. Լիտերների տեսակները և բնութագրերը: Լիտերների տեսակների, չափերի և ոճերի գրելաձևերը:
8. Ֆայլեր և ֆայլադարաններ: Նույնարկողներ, պահեստավորված բառեր:
9. Օպերացիոն համակարգերի դերը և նշանակությունը: Համեմատական բնութագրերը:
10. WINDOWS օպերացիոն համակարգում օգտագործվող պատուհանների ընդհանուր կառուցվածքը:
11. Գործողություններ WINDOWS օպերացիոն համակարգում օգտագործվող պատուհանների հետ (տեղաշարժ, չափերի փոփոխում, տվյալների շրջապտույտ և այլն):
12. Վիրուսներ: Վիրուսների տեսակներ:
13. Ցանցեր: Ցանցերի տեսակները:

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՏՈՄՄԻ ՕՐԻՆԱԿ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2022-2023 ուստարվա 1 կիսամյակ

Ֆակուլտետ

Քաղաքային տնտեսություն և էկոլոգիա

Ամբիոն

Ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր

Դասընթաց (կրթամոդուլ)

6.22ԻՀՏ002-Տեղեկատվական տեխնոլոգիայի հիմունքներ

ՀԱՐՑԱՏՈՄՍ 1

1. Ժամանակակից անհատական օգտագործման համակարգիչներ: (0-4 միավոր)
Նրանց կառուցվածքը, տեսակները և բնութագրերը:
2. MS Word տեքստային խմբագրիչում տեքստի խմբագրում և ֆորմատավորում: (0-4 միավոր)

3. MS Excel ծրագրում աղյուսակի պատրաստում և հաշվարկների կատարում: (0-4 միավոր)
4. Կատարված աշխատանքների ներկայացում MS Power Point միջավայրում: (0-4 միավոր)
- Ընթացիկ ատեստավորում (0-4 միավոր)

Հաստատված է _____ ամբիոնի նիստում _____
 (ամբիոնի անվանումը) (ամիս, ամսաթիվ)

Ամբիոնի վարիչ՝ _____
 (ստորագրություն)

4 ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Կազմված է դասընթացի տվյալների բազա, որը ձևավորված է փաստաթղթային և էլեկտրոնային տեսքով:

Դասընթացի տվյալների բազան ներառում է.

- դասընթացի ծրագիրը, որն առկա է ամբիոնում,
- դասընթացի ուսումնական բաղադրիչներին վերաբերող ուսումնամեթոդական նյութերը՝ դասախոսությունների կոնսպեկտը, լաբորատոր աշխատանքների կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական ցուցումները և ձեռնարկները,
- դասընթացին վերաբերող ժամանակակից տեսալսողական միջոցները, էլեկտրոնային ցուցադրանյութերը, համակարգչային ծրագրերը,
- դասընթացի ուսումնական բաղադրիչներին վերաբերող գրականության ցանկը, գրականության էլեկտրոնային տարբերակները,
- ինֆորմացիայի որոնման համակարգեր՝ էլեկտրոնային գրադարանից օգտվելու համար,
- ընթացիկ և եզրափակիչ ատեստավորումների անցկացման թեստերը և հարցաշարերը, որոնք կիսամյակի սկզբում ներկայացվում են ուսանողներին,
- Moodle էլեկտրոնային հարթակ մուտք գործելու համար գաղտնաբառեր և այլ անհրաժեշտ տեղեկատվություն, այդտեղ տեղադրված նյութերից օգտվելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թորոսյան Ա. Համակարգչային օպերատորություն, Ուսումնական ձեռնարկ, Կրթության ազգային ինստիտուտ, Երևան, 2017 թ., 160 էջ:
2. Կոսեմյան Ս.Է., Սմբատյան Ա.Ժ. Ինֆորմատիկա և ՏՏՀ, Ուսումնական ձեռնարկ, ՀԱԱՀ, Երևան, 2013 թ., 130 էջ:
3. Ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Եր., ՀԱԱՀ, 2013, 128 էջ:
4. Ляхович В.Ф., Молодцов В.А., Рыжикова Н.Б. Основы информатики, учебник, М., КНОРУС, 2016, 348с.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. <https://library.anau.am/images/stories/grqer/hasarak/Gyulumyan-teghekatvakan.pdf>
Գյուլումյան Ս., Գալանտերյան Ա. Տեղեկատվական համակարգեր և տեխնոլոգիաներ, ուսումնական ձեռնարկ, 2016:
2. <https://library.anau.am/images/stories/grqer/Bnagitakan/informarika-kosemyan.pdf>,
Կոսեմյան Ս., Սմբատյան Ա. Ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, 2013:
3. <http://ijevanlib.ysu.am/?s=%D4%BF%D5%B8%D5%BD%D5%A5%D5%B4%D5%B5%D5%A1%D5%B6>
Ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Եր., ՀԱԱՀ, 2013, 128 էջ:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐ

1. Microsoft Word 2019
2. Microsoft Excel 2019
3. Power Point 2019

ՀԱՄԱԼՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Համալրման ենթակա ռեսուրսների կարիք չունենք:

5 ՄԻՋԴԱՍԸՆԹԱՑԱՅԻՆ ԿԱՊԵՐ (ՀԱՄԱԶԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ)

Տվյալ դասընթացից ստացված գիտելիքները և կարողությունները կիրառվում են ավարտական աշխատանքների, ռեֆերատների, կուրսային և նախագծային աշխատանքների կազմման և ներկայացման մեջ: